

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Մեգաօֆիս ՍՊԸ-ն ԱՄՄՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/112 ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի	
	ապրանքային նշանը	տեխնիկական բնութագիրը
1	Foshan Mike Dowell	<p>Ղեկավարի սեղանի հավաքածու, որը իր մեջ ներառում է սեղանի ղեկավարի, կողադիր, դիմադիր սեղանի և տումբա՝ պատրաստված բազմաշերտ խտացված MDF -ից: Երեսպատված կաղնու ֆակտուրայով շպոնից, լաքապատված բաց կարմրաշագանակագույն ներկով: Լրակազմի բոլոր քաշվող դարակները գնդիկավոր ուղղորդիչներով են: Սեղանի չափերը 1800մմx900մմx770մմ (Երկարությունxլայնությունxբարձրություն): Սեղանի երեսի մեջտեղում ներկառուցված 700մմx400մմ (Երկարությունxլայնություն) արհեստական կաշվե հատված, որի վերևի մասում առանձին փորագրված 30մմx70մմ չափերով գրիչների համար նախատեսված տարածք: Մեջտեղի հատվածում 550մմx340մմ չափերով քաշվող դարակ: Սեղանի երեսի հաստությունը 88մմ, իսկ ոտքերի հաստությունը 90մմ: Սեղանի դիմային և կողային հատվածներում առկա են նույն MDF նյութից լրացուցիչ ամրացված շեղանկյուն կտորներ, երեսպատված կաշվով, որոնք ստեղծում են վիզուալ տեսանկյունից 3D էֆեկտ: Սեղանի դիմային և կողային ոտքերի՝ ներքևի մասի ամբողջ երկայնքով առկա է նույն MDF-ից լրացուցիչ ամրացված շերտ 80 մմ բարձրությամբ: Կողադիրի չափերը 1200մմx400մմx670մմ (Երկարությունxլայնությունxբարձրություն): Կողադիրի մեջտեղի հատվածում առկա են 2 քաշվող դարակներ և 1 բաց դարակաշար, իսկ կողային մասերից մեկը բաց դարակ</p>

Նախատեսված համակարգչի համար՝ մյուս կողմում 1 բացվող դարակ: Դիմադիր սեղանը պատրաստված բազմաշերտ խտացված MDF-ից: Երեսպատված կաղնու ֆակտուրայով շպոնից, լաքապատված բաց կարմրաշագանակագույն ներկով: Սեղանի չափերը 1200մմx600մմx770մմ (Երկարությունxլայնությունxբարձրություն): Սեղանի երեսի հաստությունը 90մմ, իսկ կողային ոտքերի հաստությունը 70մմ: Սեղանի երկու ոտքերի արանքում առկա է նույն MDF նյութից կապակցման գոտի սեղանի հնարավոր ճոճը թույլ չտալու համար: Տումբայի չափերը 500մմx400մմx670մմ: Այն ունի 3 քաշվող դարակներ, որոնցից վերևինի վրա առկա է կետրոնացված փական: Տումբան և կողադիրը հողովակավոր անիվներով են: Գրասենյակային անշարժ աթոռ /2 հատ/ փայտե հիմնակմախքով, չորս ոտանի, 2,8x4 սմ հաստության փայտով: Արմնկակալները փայտյա՝ կաշվե երեսպատումով: Նստատեղը և թիկնակը փափուկ 5 սմ հաստության սպունգով, պաստառապատված՝ բարձրորակ կաշվին փոխարինողով: Թիկնակի բարձրությունը հատակից 110 սմ, նստատեղի բարձրությունը հատակից 47 սմ: Նստատեղի չափսերը՝ 50x50 սմ, թիկնակի չափսերը՝ 60x50 սմ: Արմնկակալերի բարձրությունը նստատեղից 18սմ: Գրապահարան /3 դռնանի/ պատրաստված խտացված MDF-ից երեսպատված կաղնու ֆակտուրայով շպոնից, լաքապատված բաց կարմրաշագանակագույն ներկով: Գրապահարանի բարձրությունը 200սմ, խորությունը՝40սմ, լայնքը 120սմ: Գրապահարանը բաղկացած է երեք հավասարաչափ /40սմ/ հատվածներից: Վերևի մի հատվածը 3 դուռ, որից մեկը փակ, մյուս երկուսը՝ ապակյա, բաժանված երկու մասի: Ներքևի երեք դարակաշարերը փակ: Ապակիներով դռների շրջանակները 450-ով հավաքած, որի մեջ ներդրված են ապակիները: Ապրանքները նոր են՝ չօգտագործված: Ապրանքների վերջնական տեսքը կհամաձայնեցվի պատվիրատուի հետ: Մատակարարման հասցեն՝ ք. Մասիս, Կենտրոնական հր. թիվ 4, 3-րդ հարկ: Ապրանքի բեռնումը և բեռնաթափումը, այդ թվում նշված հարկ բարձրացնելը, կիրականացվի մատակարարի ուժերով և միջոցներով:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

МЕГАОФИС ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ЦУУՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/112 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар	
	товарный знак	технические характеристики
1		